Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Եղնիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (25 դասաժամ), հասարակագիտություն (3դասաաժամ), հայոց եկեղեցու պատմություն (3 դասաժամ), ֆիզիկա (8 դասաժամ), բնագիտություն (2 դասաժամ), բնություն (2դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձև1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. §Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հեկտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին,** Եղնիկի հիմնական դպրոցում. Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Եղնիկ բնակավայր, 1-ին փողոց, շենք՝12:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093-31-03-54: